

խեցաւ առ անձկալին իւր Քրիստոս . կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս եւ ամիսս ըստ ամացն ⁵» :

Ուրիշ ականատես մը, Ղուկաս Գառնեցի կը գրէ 1631ին . Մովսէս «զնախազահ աթոռն զսուրբ Էջմիածինն առաւել եւս նորոգեաց եւ սլայծառացոյց . զի էր յառաջ իբրեւ զտաղաւար մրգապահաց՝ խաւարեալ եւ եղծեալ եւ յամենայն զարդուց կողոպտեալ . այլ եւ թռչնոց երկնից եղեալ բոյն եւ զաղարք . եւ այսպէս սրբազան հայրապետս ամենաւայժառ շքեղութեամբ եւ բազմագան երանգաւք զարդարեալ լուսաւորեաց , քանզի չրջապատ լայնանխտ պարսպօք եւ յոքնակի հրաշակերտ շինուածովք մեծամեծ եւ կովածոյ վիմօք , այլ եւ այրեալ աղիւսով եւ կրով եւ ծեփեալ բռամբ որմով հաստահեղոյս եւ պերճագոյն ճոխացուցեալ : Այլ եւ զեկեղեցին փարթամացոյց զանազան եւ պատուական անօթով եւ քահանայական եւ հայրապետական զգեստիւ՝ սուրեկ եւ ընտիր յոսկոյ եւ արծաթոյ» (Էջմ . 2372, թղ . 355ա) :

Իսկ Գրիգոր Դարանաղցի (էջ 295—296) , որ ի լրոյ ծանօթ է գործուածներուն կը գրէ . «Եւ նա սկիզբն արար շինուցն եւ խախտելոյն վերստին նորոգութեանն , զթիւրեալ կարգացն եւ սահմանացն եկեղեցականաց եւ ուխտականացն եւ աշխարհականացն վերստին

⁵ Ձեռ . էջմ . 981 . հրատ . Արարատ , 1888 , էջ 417—418 :